

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Հոկտեմբերի 19-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց Ներդրողների խորհրդի նիստ:

Խորհրդի նիստում քննարկվելիք հարցերից բացի, վարչապետը ներկայացրեց երկրում տիրող քաղաքական և տնտեսական իրավիճակը՝ հուսադրելով, որ տարին կավարտվի տնտեսական աճի երկնիչ ցուցանիշով, ինչը նախադրյալ կհանդիսանա հաջորդ տարվա պետական բյուջեի ավելացման:



Ըստ կառավարության ղեկավարի, տնտեսական աճին զգալիորեն նպաստել է նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը, եւ 2022 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալը: Այն նախորդ տարվա ցուցանիշների համեմատ, կրկնապատկվել է եւ կազմել 922 մլն դոլար, ինչը նույնպես լավատեսության կարելուր պատճառ է:

յաջրել նաև հաջորդ տարվա համար նախատեսված նոր նախագծերի, նախաձեռնությունների եւ առաջնահերթությունների վերաբերյալ կառավարության տեսլականը:

Կառավարության վարչակազմում կայացած նիստին ներկա էին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, ֆինանսների նախարար Լաշա Խուլցիշվիլի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՄՈԼԴՊԱ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԱՌԱՋԻՆ ՉՎԵՐԹՈՎ ՄԵԿՆԵՑ ՔԻՇԻՆԵՎ



Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Մոլդովայի նախագահ Մայա Սանդուխի հետ՝ դեմ առ դեմ եւ ընդլայնված կազմով, խորհրդարանի նախագահ Իգոր Գրոսու-

Հոկտեմբերի 17-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Թբիլիսի-Քիշինե օդային առաջին չվերթով, աշխատանքային այցով մեկնեց Մոլդովա:

ի, վարչապետ Նատալյա Գավրիլիցայի հետ: Հանդիպումներին կողմերը շոշափեցին Վրաստանի եւ Մոլդովայի առջեւ ծառայած մարտահրավերները, ուկրաինայի պատերազմն ու դրա ազդեցությունը տնտեսական եւ սոցիալական հարցերի վրա, քննարկեցին վրաց-մոլդովական տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները, ընդգծվեցին երկու երկրների Եվրատլանտյան համագործակցության անհրաժեշտությունը, մանրամասնեցին Եվրամիության անդամակցության ուղղությամբ իրականացվող քայլերը:

ՄԱՐԳԱՆՔԻ ՓԱՌՍՈՆԻՆ ԸՆԴՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԿԻՐՎԱԾ ԲԱԿՈՒՐԻԱՆԻՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌՍՈՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 20-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ղեկավար Լեռի Խաբելուվի հետ:

րաստական միջոցառումները: Որպեսզի Վրաստանը, մասնավորապես՝ Բակուրիանին, արժանավայել կիչուրընկալի 2025 թվականի Եվրոպայի ձմեռային (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Հանդիպմանը քննարկվեցին 2025 թվականի Եվրոպայի ձմեռային պատանեկան օլիմպիական փառատոնի նախապատ-

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՄԱՐԳԱՆՔԻ ՊԱՇՎԱԾՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՆԳՈՒՅՑԱԼՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՄԵԾ ՊԱՏԻՎ Է»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի մշակույթի նախարարության շենքի բակում, Թբիլիսիի թիվ 104 համրային դպրոցի հարակից տարածքում ընթացող վերականգնողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել էր երկու դամբարան, որից հետո, նախարարի հրահանգով, նախարարությունն ամփոփապես դադարեցրել էր աշխատանքային գործընթացը եւ Մշակութային ժառանգության պահպանության գործակալության հնագետներին հրավիրել տարածք:

Նախարարության տարածած տեղեկատվության համաձայն, հնագետները հայտնաբերել էին հինգ աճյուն: Նրանցից երկու տապանաքարերի վրա հայտնաբերվել են պահպանված արձանագրություններ: Ըստ մակագրության, տապանաքարերից մեկը Հայոց տաճարի ավագ քահանա Հովհաննես Տեր-Պո-

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՎՐԱՍՏԱՆՈՒ ՊՈՐՏՈՂ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԳՆԵՐԸ ԿՏԵՂՓՈԽՎԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՊՐԲԵՋԱՆ ՍԱՀՄԱՆ

Եվրոպական խորհուրդը որոշել է Եվրամիության 40 դիտորդ ուղարկել Հայաստան՝ Ադրբեջանի սահմանի երկայնքով տարածաշրջանում տիրող իրավիճակի մոնիթորինգի, վերլուծության եւ գեկուցման համար:

Նշված որոշումը խորհուրդն ընդունել է հոկտեմբերի 6-ին՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի քառակողմ հանդիպումից հետո:

Եվրամիության դիտորդների արագ տեղակայումն ապահովելու նպատակով, Եվրոպական խորհուրդը որոշել է Հայաստան-Ադրբեջան սահմանով ժամանակավորապես ուղարկել Վրաստանում գործող Եվրամիության դիտորդական առաքելության մոնիթորինգի փորձագետներ: Հիշեցնենք՝ հոկտեմբերի 6-

ին Պրահայում Երեւանն ու Բաքուն հաստատել են իրենց հավատարմությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991 թվականի դեկտեմբերի 21-ին Ալեքսանդրապոլի համաձայնեցված Հռչակագրին, որով երկու պետություններն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը:

Բացի այդ, Հայաստանը համաձայնել է Եվրամիության քաղաքացիական առաքելություն տեղակայել Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով, Ադրբեջանը համաձայնել է համագործակցել այնքանով, որքանով առնչություն կունենա հարցի հետ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԾԱՆԱՀՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Վրաստանում Հայաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը շարունակում է ճանաչողական հանդիպումները Վրաստանի իշխանությունների ներկայացուցիչների հետ:



Օրերս Աշոտ Սմբատյանը հանդիպում ունեցավ Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Սիխեիլ Չխենկելու հետ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Վրաստանի եւ Հայաստանի կրթական ոլորտը համակարգող գերատեսչությունների միջեւ առկա սերտ համագործակցությանը եւ դրա ընդլայնման հնարավորություններին: Կարելուրդեց երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների միջեւ փոխգործակցության ակտիվացումը համատեղ գիտաժողովների, ուսանողների փոխանակման եւ այլ ծրագրերի իրականացման միջոցով:

ճանաչողական հանդիպումների շրջանակներում, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը հանդիպում ունեցավ Վրաստանի կրթական հարցերով պետական գործակալության ղեկավար Զաքա Վաշաղմաձեի, Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Նիկոլոզ Սամխարաձեի եւ Վրաստանի խորհրդարանի «Միացյալ ազգային շարժում» - «Ուժը միասնության մեջ է» միասնական ընդդիմություն խմբակցության ղեկավար Խաթիա Դեկանոիձեի հետ:

դոսյանինն է, իսկ մյուսը՝ նրա տիկնոջը: Ինչպես ասված է Վրաստանի մշակույթի նախարարության կայքում, հայտնաբերման մասին ծանուցում է ուղարկվել հայ համայնքին, քանի որ հայտնի է, որ նախկինում այդ տարածքում եղել է հայկական եկեղեցի, իսկ եկեղեցուն կից հայկական գերեզմանոցն ավերվել է խորհրդային տարիներին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱճԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

(Ալիգը՝ 1-ին էջում)

լին, շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարար Օթար Շամուգիան, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Իրակլի Քարսելաձեն, Ներդրողների խորհրդի քարտուղարության ղեկավար Գիորգի Չերքեզիձիլին, Եվրոպական վերակառուցման եւ զարգացման բանկի Կովկասի տարածաշրջանային տնօ-

րեն Կատարինա Բյորլին Յանսենը, Վրաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Մարկ Քլեյթոնը, Վրաստանում Ամերիկայի առևտրի պալատի առաջին փոխնախագահ Իրակլի Բայդաշվիլին, Վրաստանի բիզնես ասոցիացիայի տնօրեն Լեւան Վեփիվաձեն, Եվրամիություն-Վրաստան գործարար խորհրդի գլխավոր քարտուղար Զվիադ Գուսբուրիձեն, Գերմանիայի տնտեսական միության խորհրդի նախագահ Սաշա

Տերնետը, Վրաստանում Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներկայացուցիչ Թեա Գիգիբերիան, բիզնես օմբուդսմեն Օթար Դանելիան, կառավարության վարչակազմի ղեկավար Ռեւազ Չավելիձեն, Վրաստանում Ամերիկայի Առևտրի պալատի գործադիր տնօրեն Ջորջ Ուելթոնը, Գերմանական տնտեսական միության գործադիր տնօրեն Թոմաս Կիմեսվեյգերը, Եվրամիություն-Վրաստան Գործա-

րար խորհրդի գործադիր տնօրեն Գիորգի Կաճարավան, Միջազգային առևտրի պալատի գործադիր տնօրենի տեղակալ Մագրա Բուրբաշվիլին, Վրաստան-Թուրքիա բիզնես ասոցիացիայի գործադիր քարտուղար Լեւան Բուլբաձեն, Ներդրողների խորհրդի քարտուղարության իրավական փորձագետ Գիորգի Ջուղելին, Ներդրողների խորհրդի քարտուղարության բիզնես վերլուծաբան Գիորգի Էդիլաշվիլին:



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ԼԻԶ ԹՐԱՍՆ ԴԱՇՏՈՆԻՆ ԴԻՄԱՑԱՎ 44 ՕՐ...

Մեծ Բրիտանիայի վարչապետ Լիզ Թրասը հրաժարական է տվել 44 օր պաշտոնավարելուց հետո:

Ընդդիմախոսները Լիզ Թրասին մեղադրում էին տնտեսական ճգնաժամի սրման մեջ: Նրա առաջարկած փոփոխությունները՝ հարկերի նվազեցումը, մեծ աղմուկ է բարձրացրել բրիտանական տնտեսական բորսայում, նվազել է խուսափողների պատճառով Թրասը հրապարակավ ընդունել է թույլ տված սխալները եւ խնդիրները լուծելու համար փոխել ֆինանսների նախարարին:

Բրիտանական լրատվամիջոցների տեղեկատվությամբ, նախկին վարչապետ Բորիս Ջոնսոնը վերադառնում է Կարիբյան կղզիներից պայքարելու Մեծ Բրիտանիայի վարչապետության համար:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐ ԻՐԱՆԻ ԴԵՍ

Եվրամիության անդամ երկրները որոշել են նոր պատժամիջոցներ սահմանել Իրանի նկատմամբ՝ կապված Ուկրաինայի շուրջ ստեղծված իրավիճակում ՌԴ-ին աջակցելու հետ: Պատժամիջոցներ են կիրառվել այն անձանց եւ կազմակերպությունների նկատմամբ, որոնք կարող են ներգրավված լինել իրանական անօդաչու թռչող սարքերի մշակման եւ Ռուսաստանին մատակարարման մեջ: Նախնական տեղեկություններով, ԵՄ-ում նրանց ակտիվները կսառնեցվեն, իսկ մուտքը ԵՄ երկրներ կարգվի:

ՖՐԱՆՍԻԱ

ԱՆՎԱՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ֆրանսիայի Ազգային ժողովը հոկտեմբերի 24-ին կքննարկի կառավարության անվտանգության շուրջ քվեարկություն անցկացնելու հնարավորության հարցը:

Այդ հարցի քննարկման առանձին հայտեր ներկայացրել է ժայռահեղ աջ «Ազգային միավորում» կուսակցությունը եւ ձախերի ու կանաչների կուսակցությունների «Նոր ժողովրդական էկոլոգիական եւ սոցիալական միություն» կուսիցիան: Համապատասխան հայտերը կուսակցությունները ներկայացրել են նրանից հետո, երբ կառավարությունը որոշեց գործարկել Ֆրանսիայի սահմանադրության 49.3 հոդվածը, որպեսզի հավանություն տա հաջորդ տարվա բյուջեի օրինագծին, առանց խորհրդարանի ստորին պալատի հավանության:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ը «ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՕՐՆ» Է

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՄ Է ՀՆԱՐԱՎՈՐԸ, ՈՐՊԵՍՅԻ ԱՌԱՎԵԼ ԳՆԱՀԱՏՎԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՎԱՍՏԱԿԸ»



Հոկտեմբերի 17-ին «Վետերանների օրվան» նվիրված հանդիսավոր միջոցառմանը, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հարգանքի տուրք մատուցեց հերոս-վետերաններին, ովքեր հերոսաբար պաշտպանել են երկրի անունը, արժանապատվորեն ներկայացրել Վրաստանը տարբեր առաքելություններում:

պանեցին մեր երկրի անունը, պատվով ներկայացրին մեր երկիրը տարբեր առաքելություններում: Ժամանակին որպես ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող երկիր, մենք Աֆղանստանում ամենամեծ ներդրումն ենք ունեցել, Վրաստանը Աֆղանստանում ներկայացված էր մարտիկների ամենամեծ թվով: Մենք կորցրեցինք ավելի քան 30 հերոս զինվոր, վիրավորվեցին հարյուրավորները: Նրանք մեր անպարտելի, անկոտրուն զինվորականներն ու վետերաններն են: Եվս մեկ անգամ ուզում եմ շնորհակալություն հայտնել: Եվ ընդհարապես, մենք պետք է ամեն օր շնորհակալություն ասենք նրանց:

Իհարկե, մեր հասարակության զարգացման չափանիշն այն է, թե ինչպես ենք մենք զնահատում մեր վետերաններին նրանց ավանդի ու վաստակի համար: Մեր կառավարությունն անում է ամեն ինչ անելու է ձեր ջանքերն էլ ավելի զնահատելու համար: Ձեր օրինակներով պետք է դաստիարակենք մեր երիտասարդ սերունդներին: Ուզում եմ եւս մեկ անգամ շեշտել, որ դա մեր պարտքն է, մեր կառավարության պարտքը՝ զնահատել վետերաններին, եւ ես խոստանում եմ էլ ավելին անել ձեր եւ ձեր ծառայության համար: Մեկ անգամ եւս մեր կառավարության անունից շնորհակալություն եմ հայտնում եւ մաղթում առողջություն ու հաջողություններ: Աստված ձեզ պահպան,- ասաց վարչապետը:

Կառավարության ղեկավարի խոսքով, Վրաստանը ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող ամենամեծ երկիրն էր Աֆղանստանում, որտեղ զոհվեց ավելի քան 30 հերոս զինվոր, վիրավորվեցին հարյուրավոր մարտիկներ:

- Ուզում եմ բոլորին հիշեցնել, որ մեր հերոս զինվորները, որոնցից շատերն այժմ վետերաններ են, հերոսաբար պաշտ-

ղանստանում ներկայացված էր մարտիկների ամենամեծ թվով: Մենք կորցրեցինք ավելի քան 30 հերոս զինվոր, վիրավորվեցին հարյուրավորները: Նրանք մեր անպարտելի, անկոտրուն զինվորականներն ու վետերաններն են: Եվս մեկ անգամ ուզում եմ շնորհակալություն հայտնել: Եվ ընդհարապես, մենք պետք է ամեն օր շնորհակալություն ասենք նրանց:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոկտեմբերի 19-20-ը Հայաստանում էր գտնվում Վրաստանի պաշտպանության նախարարության սոցիալական հարցերի եւ հոգեբանական աջակցության վարչության պատվիրակությունը:

Այցի շրջանակներում, պատվիրակության ընդունել է Հայաստանի պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետ Ալեքսանդր Ավետիսյանը: Գործընկերներին է ներկայացվել Հայաստանի օրենսդրությամբ զինծառայողների եւ նրանց ընտանիքների համար սահմանված արտոնությունների ու երաշխիքների համակարգը, այդ ուղղությամբ պետության կողմից իրա-

կանացվող ծրագրերը, քննարկվել են զինծառայողների սոցիալական պաշտպանությանն առնչվող այլ հարցեր:

Հանդիպման արդյունքներով, պայմանավորվածություններ են ձեռք բերվել փոխադարձ հետաքրքրություններ կայացնող ուղղություններով հետագա համագործակցության վերաբերյալ:

Վրաստանի պաշտպանության նախարարության սոցիալական հարցերի եւ հո-



գեբանական աջակցության վարչության պատվիրակությունը հանդիպումներ է անցկացրել նաեւ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամում եւ Հայաստանի աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունում:

ՈՒՄՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 240-ՐԴ ՕՐ

ՈՒՄՍԱԿԱՆ ԱԳՐԵՍԻՎՅԻ ԶՈՐ Է ԴԱՐՁԵԼ ԱՎԵԼԻ ՔԱՆ 400 ԵՐԵՆԱԸ

Հոկտեմբերի 18-ի դրությամբ, Ուկրաինայում Ռուսաստանի կողմից ձեռնարկված լիամասշտաբ պատերազմական գործողությունների արդյունքում զոհվել է 425 երեխա: Այդ մասին տեղեկատվությունը տարածել է Ուկրաինայի Գլխավոր դատախազությունը:

Գերատեսչության հավաստմամբ, այդ տվյալները լրիվ չեն, քանի որ դրանցում չի ներկայացված ժամանակավորապես բռնազավթված տարածքներում զոհված երեխաների թիվը:

ՈՒՄՍԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՐՉԱԿՈՒՄՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ

Ռուսական ուժերը հերթական հարձակումն են իրականացրել Կիեվի էներգետիկ ենթակառուցվածքների վրա: Երեք հարված է հասցվել քաղաքի ծախսափնյա էներգամատակարարման օբյեկտին:

Ուկրաինական կողմի տեղեկատվությամբ, միաժամանակ պայթյունների ծայեր են լսվում Կիեվի մարզի Բրովարի քաղաքում, որտեղ աշխատում է ՀՕՊ համակարգը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՈՒՊԱՆ ԾԱՆԱԶԵԼ Է ԻՉՔԵՐԻԱՅԻ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 18-ին Ուկրաինայի Գերագույն ռադան Իչքերիայի Չեչենական Հանրապետությունը ճանաչել է Ռուսաստանի Դաշնության կողմից ժամանակավորապես բռնազավթված եւ դատապարտել չեչեն ժողովրդի նկատմամբ ցեղասպանության իրականացումը:

Որոշման օգտին քվեարկել է 287 ժողովրդական պատգամավոր: Գերագույն ռադան ՄԱԿ-ի անդամ պետություններին եւ միջազգային կազմակերպություններին կոչ է արել ապահովել այն միջազգային հանցագործությունների անկախ ու անաչառ հետաքննությունը, որոնք կատարվել են ժամանակավորապես օկուպացված Իչքերիայի Չեչենական Հանրապետության տարածքում եւ ապահովել մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելը:

Վ. ԶԵԼԵՆՍԿՈՒ ՀՐԱՍՏԱՆԱԳՐՈՎ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԶՈՐՍ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հրամանագրով, Ուկրաինան պատժամիջոցներ է սահմանել

Վրաստանի չորս քաղաքացու՝ Ալեքսանդր Իվանիշվիլու, Ուլա եւ Տատե Մամացաշվիլիների, ինչպես նաեւ Քեթեւան Խարաիձեի նկատմամբ:

Հրամանագրի համաձայն, պատժամիջոցները ներառում են ակտիվների արգելափակում, առևտրային գործառնությունների սահմանափակում, ռեսուրսների տարանցում, թռիչքներ ու փոխադրումներ Ուկրաինայի տարածքում, Ուկրաինայի սահմաններից դուրս կապիտալի դուրսբերման կանխում, տնտեսական եւ ֆինանսական պարտավորությունների կասեցում, լիցենզիաների եւ այլ թույլտվությունների չեղարկում կամ կասեցում, Ուկրաինայի ազգային բանկի թույլտվությունների եւ լիցենզիաների տրամադրման, ուկրաինական պետական պարգեւների բռնագրավում, հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման արգելք:

Ընդհանուր առմամբ, Ձեյլենսկու հրամանագրով պատժամիջոցներ են կիրառվել ավելի քան 3600 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց մեծ մասը Ռուսաստանի քաղաքացիներ են: Պատժամիջոցների ենթարկվածներից են Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի որդին եւ գործարար Ռոման Աբրամովիչը:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԻՐԱԿԻ ԿՈՐԱՄԻՏԵ. «ԸՆՏՐԱՇԵՄԸ ԿՆՎԱԶԵՑՎԻ, ԵԹԵ ԸՆԴՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆԻ ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ»



«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության նախագահ Իրակլի Կորախիձեն անդրադարձավ ընտրաշեմի նվազեցման վերաբերյալ ընդդիմության կողմից բազմիցս բաժրածայնած թեմային:

Նրա խոսքով, Վրաստանը ընտրական շեմն իջեցնելու պարտավորություն չունի, թեև, եթե ընդդիմության կողմից բեռնացման աստիճանի նվազեցման պատրաստակամություն նկատվի, կառավարող թիմը կվերադառնա հարցի քննարկմանը հաջորդ տարի կամ 2024 թվականին՝ հավելելով, որ սա չի վերաբերում 12 կետերի բաղկացուցիչ մասը չէ, եւ ոչ մի պարտավորություն չկա:

Ուստի, պարտավորություն չկա: Մենք նշել ենք, որ այս տարի այս օրինագիծը չի քննարկվի, բայց եթե տեսնենք բեռնացման աստիճանը նվազեցնելու ընդդիմության պատրաստակամությունը, հավանաբար հաջորդ տարի կամ 2024 թվականին կանդիդատներն այս հարցին: Մինչ այդ, հարցը չի քննարկվի, - հայտարարեց Իրակլի Կորախիձեն:

Ուստի, պարտավորություն չկա: Մենք նշել ենք, որ այս տարի այս օրինագիծը չի քննարկվի, բայց եթե տեսնենք բեռնացման աստիճանը նվազեցնելու ընդդիմության պատրաստակամությունը, հավանաբար հաջորդ տարի կամ 2024 թվականին կանդիդատներն այս հարցին: Մինչ այդ, հարցը չի քննարկվի, - հայտարարեց Իրակլի Կորախիձեն:

ՎՐԱՍԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ

Յուրեղանի 18-ին Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց սահմանադրական փոփոխությունները գլխավոր դատախազի ընտրության վերաբերյալ:

Փոփոխությունների համար պահանջվել է 113 պատգամավորի աջակցությունը: Փոփոխություններին կողմ է քվեարկել 126 պատգամավոր, դեմ չի գրանցվել: Քվեարկությանը ներկա չեն եղել «Քաղաքացիներ» կուսակցության անդամները: Օրենքի նախագծով, հաջորդ երկու գումարումների խորհրդարանը լրիվ կազմի երեք հինգերորդ մեծամասնությամբ ընտրում է գլխավոր դատախազին: Նախագծի համաձայն, եթե խորհրդարանը երկու անգամ չկարողանա ընտրել գլխավոր դատախազ՝ լիիրավ կազմի երեք հինգերորդ մեծամասնությամբ, ապա խորհրդարանն ընտրում է գլխավոր դատախազ:

Լիիրավ անդամների մեծամասնությամբ: Բացի այդ, օրենքի նախագիծն ընդունելու է, որ երկրորդ եւ երրորդ քվեարկությունը կանցկացվի համապատասխան նախորդ քվեարկությունից ոչ շուտ, քան 28-րդ օրը, եւ կանցկացվի նույն թեկնածուի քվեարկությունը: Ըստ նախագծի, հաջորդ երկու գումարումների խորհրդարանի ամբողջական կազմի մեծամասնությամբ ընտրված գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը կլինի մեկ տարի: Բացի այդ, գլխավոր դատախազի ընտրության կարգի փոփոխությունը Եվրամիության 12 համընդարարականներից մեկն է:


ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՒՆ ԸՆԴՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԱԿՈՒՐԻԱՆՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԴԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՒՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

պատանեկան օլիմպիական փառատոնը, իսկ հաջորդ տարի կսկսվեն կոնկրետ միջոցառումներ, ընդհանուր առմամբ կծախսվի 100 մլն լարի: Երկրի վարչապետի ու Ազգային օլիմպիական կոմիտեի նախագահի համդիպմանը նշվեց, որ 2023-2024 թվականներին նախատեսվում է կոնկրետ ենթակառուցվածքային օբյեկտների կառուցում, ինչը վրացի մարզիկներին հնարավորություն կտա մարզվել սեփական երկրում, եւ ոչ արտասահմանում: Կառավարության ղեկավարը լիակատարաբար ղեկավարում է իրականացվող աշխատանքները:

տար աշակերտներին խոստացավ Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ղեկավարին: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի փոխվարչապետ, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարար Թեա Ծուլուկիանին, ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին, կառավարության աշխատակազմի ղեկավար Ռեւա Զավելիձեն, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության փոխնախարար Իոսեբ Բաղաթուրիան եւ Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի փոխնախագահ Սամուկա Խաբարելին:



ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ԲՆԱՐԿՎԵՅԻՆ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԲԱՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ



Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած այցի շրջանակներում, Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին եւ Ազգային բանկի նախագահ Կորա Գվենետաձեն համդիպեցին Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Փոլ Չիլբերտի, Մերձավոր Արեւելքի եւ Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի ղեկավար Ջիհադ Ազուրի, Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսական հարցերի բաժնի ղեկավար Վիտոր Գասպարի հետ:

լին, ինչպես նաեւ Ազգային բանկի փոխնախագահ Արչիլ Մետսվիրիշվիլին, ընդգծվեց Վրաստանի ու Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ համագործակցությունը՝ երկրի մակրոտնտեսական կայունությանն ու կառուցվածքային բարեփոխումներին աջակցելու ուղղությամբ: Ուշադրություն հատկացվեց 2022-2023 թվականների եւ միջնաժամկետ հատվածի հարկաբյուջետային եւ դրամավարկային քաղաքականության խնդիրներին:

լին, ինչպես նաեւ Ազգային բանկի փոխնախագահ Արչիլ Մետսվիրիշվիլին, ընդգծվեց Վրաստանի ու Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ համագործակցությունը՝ երկրի մակրոտնտեսական կայունությանն ու կառուցվածքային բարեփոխումներին աջակցելու ուղղությամբ: Ուշադրություն հատկացվեց 2022-2023 թվականների եւ միջնաժամկետ հատվածի հարկաբյուջետային եւ դրամավարկային քաղաքականության խնդիրներին:

ՔՐԵԱԿԱՆ

ՎԱԿԵԻ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՂԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԶԵԲԱԿԱԼՎԵԼ Է ԻՆԸ ՄԱՐԴ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը Վակեի այգում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ ինը մարդ է ձերբակալել:

Այս մասին ճեպագրույցում հայտարարել է ՆԳ նախարարության թբիլիսիի ոստիկանության վարչության փոխտնօրեն Կախա Մուրադաշվիլին: Ըստ ՆԳՆ-ի, ձերբակալվածների թվում են թբիլիսիի

ի քաղաքապետարանի շրջակա միջավայրի պահպանության ծառայության պետի տեղակալը, «Գրինսերվիս+» ՍՊԸ-ի տնօրենը, «Գրինսերվիս+» ՍՊԸ-ի գործերի կառավարիչը եւ «Նյու Մետալ Դիզայն»-

ի ներկայացուցիչը, «Մշնեքուպերտ» ՍՊԸ-ի տնօրենը եւ նույն ընկերության տեսուչը, ինչպես նաեւ երկու մասնավոր էլեկտրատեղակայան: Տեղի ունեցածի կապակցությամբ, թբիլիսիի քաղաքապետարանի շրջակա միջավայրի պահպանության ծառայության ղեկավար Գիգա Գիգաշվիլին հրաժարական է տվել:

Պիշեցնենք, որ հոկտեմբերի 13-ին թբիլիսիի Վակեի զբոսայգում, շատրվանի շինարարության ժամանակ թույլ տված անփութության արդյունքում հոսանքահավել էր երեք երեխա, որոնցից մեկը 13-ամյա Մարիտա Մեփարիշվիլին, մահացել էր: Տեղի ունեցածի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ:

ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲՆԱՊԱՐԴԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՎՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին մասնակցեց եւ ելույթ ունեցավ Հնդկաստանում անցկացվող Շրջակա միջավայրի պահպանության «Շարժումը կյանքի առաքելություն» շրջակա միջավայրի հարմարեցված ապրելակերպ» միջազգային համաժողովում:

Իր խոսքում վարչապետը նշեց, որ Վրաստանի ազգային զբոսայգիների տարածքը զգալիորեն ընդլայնվել է եւ այսօր զբաղեցնում է երկրի տարածքի գրեթե 12 տոկոսը: Երկրի տարածքի 40 տոկոսը ծածկված է անտառներով եւ, բնականաբար, բնապահպանական կառավարման համակարգն ամրապնդելու նպատակով, Վրաստանը կատարելագործել է շրջակա միջավայրի գնահատման համակարգերն ու ներդրել էկոլոգիական հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի սկզբնական փուլերում հասարակության մասնակցության ավելի արդյունավետ մեխանիզմներ:

ԷԼԻՍՈ ԲՈԼՔՎԱԶՆԵ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՅԻ

Դաշնակահարուհի Էլիսո Բոլքվաձեն երրորդ անգամ արժանացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Խաղաղության արտիստուհու կոչմանը:



Վերոնջյալ պատվավոր կոչումը վրաց դաշնակահարուհուն առաջին անգամ շնորհվել է 2015 թվականին, որից հետո նա շարունակել է հաջողությամբ իրականացնել այդ առաքելությունը: Ինձ համար մեծ պատիվ է երրորդ անգամ Խաղաղության արտիստուհու կոչման շնորհումը, - հայտարարել է վրաց դաշնակահարուհին:

ՋԱԲԱ ՍԱՄՈՒՇԻԱՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏՅԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ՝ ՎԵՑ ԱՍՍՈՎ

Թբիլիսիի պետական համալսարանում ավարտվեց ռեկտորի պաշտոնակատարի ընտրությունը: Ընտրություններին մասնակցեց համալսարանի գիտխորհրդի 30 անդամ, որոնցից 28-ը աջակցեց Ջաբա Սամուշիանին: Նա ռեկտորի պաշտոնը կզբաղեցնի առավելագույնը վեց ամիս ժամկետով:



ԹՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի մրցույթին մասնակցում էր մեկ թեկնածու՝ Ջաբա Սամուշիան: Քվեարկության գործընթացն ընթանում էր ուսանողների մի մասի բողոքի ակցիայի ֆոնին: Երիտասարդների կարծիքով՝ ընտրություններն անցկացվում են կանոնակարգի խախտումներով, եւ ռեկտորի պաշտոնակատարին, գիտխորհրդի փոխարեն, պետք է ընտրի գիտական անձնակազմը: Նշենք, որ ԹՊՀ ռեկտորի պաշտոնը թափուր էր մնացել, երբ ռեկտոր Գիորգի Շարվաշիձեն հոկտեմբերի 7-ին դիմել էր գիտխորհրդին՝ հրաժարականի խնդրանքով:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (21 հոկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.7657
1 ԵՎՐՈ	2.7082
100 ՌՈՒՐԼԻ	4.4913
1000 ԴՐԱՄ	6.8478

ՀԱՐՁԱՆՔԻ ՏՈՒՔ՝ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՆԳՈՒՅՑԱԼՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՄԵԾ ՊԱՏԻՎ Է»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Հոկտեմբերի 18-ին նախարարության, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանի և Թբիլիսահայ համայնքի համաձայնությամբ, մասունքները տեղափոխվել են և կվերաբաղվեն Թբիլիսիի հայ գրողների և հասարակական գործիչների հուշիվանքի պանթեոնում:

Աճյունների տեղափոխման գործընթացին մասնակցել են Վրաստանի փոխվարչապետ, մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարար Թեա Ծուլուկիանին, Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր, «Վրաստանի հայերի միության» փոխնախագահ Վան Բայբուրթյանը, հասարակության ներկայացուցիչներ:

Հայկական գրություններով մարմարե տապանաքարերի և մարդկային մասունքների հայտնաբերման վայրում Թեա Ծուլուկիանին լրագրողների հետ զրույցում ասաց, որ իրենց համար մեծ պատիվ է վարվել քրիստոնյային վայել, ինչպես վարվում են մարդիկ հանգուցյալների աճյունների հանդեպ:

- Շինարարական աշխատանքների ընթացքում, երբ իմացանք, որ դարոցի հարակից տարածքում հայտնաբերվել են հայերեն գրությամբ տապանաքարեր, անմիջապես տեղեկացրինք Վրաստանում Հայաստանի դեսպանին, Վիրահայոց թեմի հոգևոր առաջնորդին և «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին: Հանդիպեցինք նրանց, քննարկեցինք, թե ինչ սպասելիքներ ունեն այդ տարածքի հետագա աշխատանքների վերաբերյալ, հայտարարեց փոխվարչապետն ու հավելեց, որ տապանաքարերը պատկանում են հայազգի մեծանուն անձանց, որոնք թաղված են եղել 1937 թվականին խորհրդային իշխանության կողմից ոչնչացված և ավերված այդ տարիների Վիրահայոց թեմի առաջնորդանիստ «Վանք» տաճարի տարածքում:

- Մեզ համար մեծ պատիվ է վարվել քրիստոնյային վայել, ինչպես վարվում են մարդիկ հանգուցյալների նկատմամբ՝ հարգելով նրանց հիշատակը. նախարարությանը պատկանող այս տարածքը, 2023 թվականի հունվարից, հնագիտական պեղումների վայր կդառնա, ասաց Թեա Ծուլուկիանին:

Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը լրագրողների հետ հանդիպմանը ընդգծեց, որ այս իրադարձությունը հայ ու վրաց ժողովուրդների բարեկամության հերթական վկայությունն է:

- Այս իրադարձությունը հայ և վրաց ժողովուրդների բարեկամության հերթական վկայությունն է, որովհետև ես մեկ անգամ Վրաստանի իշխանություններն ու վրաց ժողովուրդը ցույց են տալիս իրենց վերաբերմունքը քաղաքակրթության և քրիստոնեական արժեքների նկատմամբ: Մենք սա շատ բարձր ենք գնահատում, վստահվումք:

տաի են՝ գնահատում է նաև վիրահայությունը:

Այն մասունքները, որ այսօր հանվում են պետք է տեղափոխվեն պանթեոն, այն ժամանակվա Թբիլիսիում գործունեություն ծավալած անձանց մասունքներ են, որոնց հարյուրավոր տարիներ առաջ հուղարկվել են այստեղ: Վրաստանի ցուցաբերած հոգատարությունը այս մասունքների հանդեպ՝ իրապես արժանի է հարգանքի,- նշեց Հայաստանի դեսպանը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս Վարդապետ Դավթյանը հեռուստաընկերությանը տված հարցազրույցում նշեց, որ այդ տարածքում գտնվող «Վանք» կոչվող եկեղեցու տեղում հայտնաբերված տապանաքարերը Վրաստանի մշակույթի նախարարության տարածքից տեղափոխված հայ մեծերը իրենց վերջնական հանգիստը կգտնեն խո-



30-ական թվականներին այս գերեզմանները ոչնչացվել են, ցավոք, չկան նաև վանքն ու հարակից կառույցները:

Գտնված մարմարե տապանաքարերից միայն 2-ի վրա կան գրություններ: Գրության համաձայն, տապանաքարերը պատկանել են եկեղեցու քահանային, որը մահացել է 1887 թվականին, իսկ նրա կինը՝ 1877 թվականին,- ասաց հնէաբանը և հավելեց, որ տարածքում ներկա պահին ե՛լ մշակութային, ե՛լ հնէաբանական տեսանկյունից՝ այլ արժեքավոր նմուշներ չկան:

Թբիլիսիի «Միասին» հասարակական կազմակերպության ղեկավար Լեւոն Չիդիյանը, ունենալով արխիվներում պահպանված «Վանքի» պատմության և պանթեոնում թաղված աճյունների դասավորվածության մասին նյութերը, առաջին օրվանից մասնակցել է հետևել և պեղումների ողջ գործընթացին՝ տրամադրելով արխիվային նյութեր հնէաբաններին: Նրա հավաստմամբ, հայտնաբերված մասունքները մեծ արժեք ունեն, քանի որ «Վանքի» Մայր տաճարը եղել է նաև մշակութային հսկա կենտրոն՝ ոչ միայն թիֆլիսահայերի, այլև ողջ արևելահայության համար:

Հիշեցնենք, որ հայտնաբերված տապանաքարերը Թիֆլիսի «Վանքի» Մայր տաճարի ավագ քահանա Տեր Հովհաննես Տեր-Պողոսյանինն ու նրա կնոջ Քալի Բեկտաբեկվայինն են:

Նախարար Թեա Ծուլուկիանու կարգադրությամբ, 2023 թվականի հունվարից տվյալ հատվածի ողջ տարածքում կիրականացվեն պեղումներ: Ապագա պեղումների վայրում թաղված են եղել Ալեքսանդր և Դարյա Մանթաշյանները, Հովհաննես, Մարիամ, Կոնստանտին Խատիսյանները, Թիֆլիսի քաղաքագլուխներ Ալեքսանդր Մատինյանցն ու Պողոս Իզմայիլովը, ուրիշներ:



ջիվանքի պանթեոնում:

- Ոչ ոք չէր ուզեց, որ իր շիրիմը հայտնվեր այս վիճակում, բոլորս էլ մարդ ենք և պարտավոր ենք մարդկայնորեն վարվել այս տապանաքարերի հետ,- ասաց թեմի առաջնորդը:

- Այսօր շատ տխուր եմ, միաժամանակ, ուրախալի օր է: Տխուր է, որովհետև շատ ենք կորցրել մեծ գերեզմաններ բազում երկրներում, և ուրախ, որ Վրաստանի փոխվարչապետը լավագույն ձևով արձագանքեց, իսկական քրիստոնյայի մեծ՝ նպաստելով, որ քրիստոնեաբար հողին հանձնվեն հայտնաբերված մասունքները: Սա լավ օրինակ է գնահատելու, թե ինչպիսի պետություն է Վրաստանն այսօր,- ասաց Վան Բայբուրթյանը:

Վրաստանի մշակութային ժառանգության պահպանման ազգային գործակալության հնէաբան Ջուրա Գիրգաձեն մանրամասնեց դամբարանների հայտնաբերման ընթացքը:

- Աղբյուրների համաձայն, հայկական եկեղեցու հարակից տարածքում գերեզմաններ են եղել, այս դեպքում՝ հայազգի ակամավոր ռազմական, հոգևոր գործիչների շիրիմները: Հայտնի է նաև, որ 20-րդ դարի

ՏԱՐԱԾՆԵՐԶԱՆ

ԲԵՍԻԿ ԱՄԻՐԱՆԱՇՎԻԼԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱԶԵ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 18-ին Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի փոխնախագահ Սզիա Գիրգորբիանին, փոխնահանգապետ Շոթա Ռոստիշվիլին, պետլիազորի աշխատակազմի ղեկավար Գիրգի Միքելաձեն, Ախալցխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին ու փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը հանդիպում ունեցան Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքի զարգացման փոխնախարար Վաչե Տերտերյանի ու նախարարության ներկայացուցիչների հետ:



Հանդիպմանը կողմերը խոսեցին Վրաստանի և Հայաստանի միջև առկա բարեկամական հարաբերությունների մասին, նշեցին կառավարություններից բացի, տարածաշրջանային իշխանությունների միջև սերտ համագործակցության հաստատման անհրաժեշտությունը: Խոսքը առանձնապես վերաբերում է սահմանամերձ երկրամասերին և մունիցիպալի-

տետներին: Կողմերը պատրաստակամություն հայտնեցին իրականացնել փորձի փոխանակում, որը մշակվել է ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման զարգացման և այդ ուղղությամբ իրականացված բարեփոխումների գործընթացում:

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԱՆԱԼՔԱԼՔԻ ԶԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ԱՅԳԻՆ



Ախալքալաքիի Ազատության փողոցի Ջիվանու անվան այգում սկսվեցին վերականգնման աշխատանքները:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանում նշեցին, որ վերականգնումն իրականացնում է «Կ-կոմպանիա» ՍՊԸ-ն. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 580 հազար լարի:

«Նշված այգին ոչ միայն անհրաժեշտ է

կարելու հանգստի գոտի է, այլև կգեղեցկացնի քաղաքի տեսքը: Ծրագրով նախատեսվում է ենթակառուցվածքները դասակարգել ժամանակակից չափանիշներին համապատասխան,- նշված է քաղաքապետարանի հաղորդագրության մեջ: Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ թժկական կարիքների:

ԱՆՎՃԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՔՎԵՍՈ ՔԱՐԹԼԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Քվեմո Քարթլիի նահանգապետ Գիրգի Դոխտուրիշվիլու նախաձեռնությամբ շրջանի բնակչությունը կստանա անվճար բժշկական ծառայություններ:

Ռուսթավիի Բժշկության տան ներգրավմամբ N1 բժշկական ատոմոբիլ կենտրոնի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ, հոկտեմբերին կենտրոնը Քվեմո Քարթլիի բնակչությանն առաջարկում է անվճար բժշկական խորհրդատվություն:

Խորհրդատվությունները կանցկացվեն հոկտեմբերի 22-ին՝ «Էնմեդիցի կլինիկայի», հոկտեմբերի 27-ին՝ «Ախտորոշիչ կենտրոն»-ի բժիշկների թիմերը: Ժամը 10-18-ը ժամանակահատվածում բժշկական ծառայություններ կմատուցեն փորձառու պերգոլուզը, օտորինոլարինգոլուզը, գաստրոէնթերոլուզը, մաշկաբանը, ռեաբիլիտոլուզը, մանկաբույժը, մանկական նյարդաբանը, էնդոկրինոլուզը, անգիոլուզը, մեծահասակների նյարդաբանը:

Քաղաքացիները կկարողանան օգտվել նաև լաբորատոր ու գործիքային հետազոտությունների 50 տոկոսանոց զեղչից՝ ըստ բժշկական կարիքների: